ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 051/2018-Լ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ, ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ, ՊԱՏՎՈԳՐՈՎ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.06.2018թ. ք. Երևան

Հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի հուշամեդալով, Ակադեմիայի ռեկտորի շնորհակալագրով, պատվոգրով և հուշանվերով պարգևատրման կարգի սահմանման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնների 14-րդ և 15-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Արդարադատության ակադեմիայի հուշամեդալով, Ակադեմիայի ռեկտորի շնորհակալագրով, պատվոգրով և հուշանվերով պարգևատրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի հուշամեդալի, Ակադեմիայի ռեկտորի շնորհակալագրի և պատվոգրի նկարագրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի հուշամեդալի, Ակադեմիայի ռեկտորի շնորհակալագրի և պատվոգրի ձևերը՝ համաձայն հավելված 3-ի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. Առաքելյան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի ռեկտորի
2018 թվականի հունիսի 4-ի թիվ 051/2018-Լ հրամանի
Հաստատում եմ՝

Ռեկտոր_____Ս.Առաքելյան

ԿԱՐԳ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ, ՊԱՏՎՈԳՐՈՎ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) հուշամեդալով (այսուհետ՝ Հուշամեդալ), Ակադեմիայի ռեկտորի (այսուհետ՝ Ռեկտոր) շնորհակալագրով (այսուհետ՝ Շնորհակալագիր), պատվոգրով (այսուհետ՝ Պատվոգիր) և հուշանվերով (այսուհետ՝ Հուշանվեր) պարգևատրման կարգը:
2. Հուշամեդալով, Շնորհակալագրով, Պատվոգրով կամ Հուշանվերով պարգևատրումն իրականացվում է Ռեկտորի հրամանով՝ Ռեկտորի նախաձեռնությամբ կամ Ակադեմիայի կառավարման խորհրդի անդամի, պրոռեկտորի կամ Ակադեմիայի աշխատակազմի ղեկավարի առաջարկությամբ: Սույն կետում նշված պարգևատրման առաջարկությանը կարող են կցվել պարգևատրման հիմնավորումը, պարգևատրման ներկայացվող անձի կենսագրական տվյալները, անձնական բնութագիրը:
3. Հուշամեդալով, Շնորհակալագրով, Պատվոգրով կամ Հուշանվերով կարող են պարգևատրվել Ակադեմիայի զարգացման, պետական կամ հասարակական գործունեության բնագավառներում մեծ ավանդ ներդրած անձինք, այդ թվում՝ Ակադեմիայի կառավարման խորհրդի անդամները, Ակադեմիայի՝ ինչպես միջազգային և օտարերկրյա, այնպես էլ Հայաստանի Հանրապետության գործընկեր կազմակերպությունների աշխատակիցները, Ակադեմիայի աշխատակիցները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք:
4. Հուշամեդալով, Շնորհակալագրով, Պատվոգրով կամ Հուշանվերով պարգևատրումն իրականացվում է աշխատանքային և մասնագիտական գործունեության ոլորտներում բազմամյա նվիրումի և արգասաբեր աշխատանքի, երկարամյա աշխատանքի, աշխատանքային պարտականությունները և առաջադրանքները գերազանց կատարելու, հոբելյանական տարեթվերի, մասնագիտական տոների, գիտության, կրթության և այլ բնագավառներում գնահատանքի արժանի ձեռքբերումների կամ ծառայությունների համար:
5. Հուշամեդալը, Շնորհակալագիրը, Պատվոգիրը կամ Հուշանվերը հանձնում է Ռեկտորը կամ նրա լիազորած անձը՝ հանդիսավոր պայմաններում:
6. Հուշամեդալը, Շնորհակալագիրը, Պատվոգիրը կամ Հուշանվերը կորցնելու, վնասվելու դեպքում պարգևատրված անձանց իրավունքները պահպանվում են: Նրանց տրամադրվում է պարգևատրված լինելու մասին հավաստագիր: Շնորհակալագրի կամ Պատվոգրի կորստի կամ վնասման դեպքում կարող է տրամադրվել վերջիններիս կրկնօրինակը:
7. Հուշամեդալի, Հուշանվերի, Պատվոգրի կամ Շնորհակալագրի կորստի կամ վնասման դեպքում հավաստագիր կամ Շնորհակալագրի, Պատվոգրի կրկնօրինակ ստանալու համար Ռեկտորին ներկայացվում է գրավոր դիմում:
8. Կորցրած կամ վնասված Հուշանվերի և Հուշամեդալի կրկնօրինակ չի տրվում:
9. Կորցրած կամ վնասված Հուշամեդալի, Շնորհակալագրի, Պատվոգրի կամ Հուշանվերի հավաստագիրը կամ Շնորհակալագրի, Հուշամեդալի, Պատվոգրի վկայագրի կրկնօրինակը

պարգևատրված անձանց հանձնում է Ռեկտորը կամ Ակադեմիայի պատասխանատու աշխատակիցը:

10. Հուշամեդալով, Շնորհակալագրով, Պատվոգրով կամ Հուշանվերով պարգևատրված անձանց հաշվառումն իրականացնում է Ակադեմիայի անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժնի աշխատակիցը, ով այդ նպատակով վարում է հատուկ գրանցամատյան:

11. Գրանցամատյանում նշվում են Հուշամեդալով, Շնորհակալագրով, Պատվոգրով կամ Հուշանվերով պարգևատրված անձի անունը, ազգանունը, պարգևատրման հիմքը, համապատասխան հրամանի ընդունման ամսաթիվը և հերթական համարը, Հուշամեդալի, Շնորհակալագրի, Պատվոգրի հերթական համարը:

Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի ռեկտորի
2018 թվականի հունիսի 4-ի թիվ 051/2018-Լ հրամանի
Հաստատում եմ՝

Ռեկտոր_____Ս.Առաքելյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ, ՊԱՏՎՈԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույնով սահմանվում է Ռեկտորի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ 051/2018-Լ հրամանով նախատեսված Հուշամեդալի, Շնորհակալագրի և Պատվոգրի նկարագրությունը:

2. Հուշամեդալի նկարագրությունը.

2.1. Հուշամեդալը պատրաստված է պրուֆֆ որակով՝ 925 հարգի արծաթից, քաշը՝ 31.1 գրամ, և պատված է բարձր հարգի ոսկով, տրամագիծը՝ 38 միլիմետր: Դիմերեսի կենտրոնական մասում պատկերված է Արդարադատության ակադեմիայի խորհրդանշանը, որի շուրջը կոր տառերով գրված է՝ «REPUBLIC OF ARMENIA» և «ACADEMY OF JUSTICE»: Դարձերեսի կենտրոնական մասում պատկերված է Արդարադատության ակադեմիայի խորհրդանշանը, որի շուրջը կոր տառերով գրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»:

2.2. Հուշամեդալի վրա դաջված է հերթական համարը:

2.3. Հուշամեդալի հետ տրվում է հավաստագիր, որում նշվում է Հուշամեդալով պարգևատրված անձի անունը, պարգևատրման հիմքը, պարգևատրման ամսաթիվը, Հուշամեդալի հերթական համարը: Հուշամեդալի հավաստագիրը ստորագրվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից, կնքվում Ակադեմիայի կնիքով:

3. Շնորհակալագրի նկարագրությունը.

3.1. Շնորհակալագի վրա գրությունները կատարված են հորիզոնական:

3.2. Շնորհակալագրի վերին կենտրոնական հատվածում պատկերված է Արդարադատության ակադեմիայի խորհրդանշանը, որի շուրջը կոր տառերով գրված է «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»:

3.3. Խորհրդանշանից ներքև՝ Շնորհակալագրի վերին կենտրոնական հատվածում, «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» գրությունն է՝ մեկ տողով, որից ներքև գրված է «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ» բառը, պարգևատրվող անձի պաշտոնը, պարգևատրման հիմքի հակիրճ հիմնավորումը:

3.4. Շնորհակալագրի ստորին կենտրոնական մասում նշված է «Ռեկտոր» բառը և Ռեկտորի անունը, իսկ նշված գրությունների միջև որոշակի հատված է առանձնացված Ռեկտորի ստորագրության և Ակադեմիայի կնիքի համար:

3.5. Շնորհակալագրի ստորին մասում մեկ տողով նշված է Շնորհակալագրի հերթական համարը և տրման տարեթիվը:

4. Պատվոգրի նկարագրությունը.

4.1. Պատվոգրի վրա գրությունները կատարված են հորիզոնական:

4.2. Պատվոգրի վերին կենտրոնական հատվածում պատկերված է Արդարադատության ակադեմիայի խորհրդանշանը, որի շուրջը կոր տառերով գրված է «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»:

4.3. Խորհրդանշանից ներքև՝ Պատվոգրի վերին կենտրոնական հատվածում, «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» գրությունն է՝ մեկ տողով, որից ներքև գրված է «ՊԱՏՎՈԳԻՐ» բառը, պարգևատրվող անձի համապատասխան տվյալները, պարգևատրման հիմքի հակիրճ հիմնավորումը:

4.4. Պատվոգրի ստորին կենտրոնական մասում նշված է «Ռեկտոր» բառը և Ռեկտորի անունը, իսկ նշված գրությունների միջև որոշակի հատված է առանձնացված Ռեկտորի ստորագրության և Ակադեմիայի կնիքի համար:

4.5. Պատվոգրի ստորին մասում մեկ տողով նշված է Պատվոգրի հերթական համարը և տրման տարեթիվը:

Հավելված 3
Արդարադատության ակադեմիայի ռեկտորի
2018 թվականի հունիսի 4-ի թիվ 051/2018-Լ հրամանի
Հաստատում եմ՝

Ռեկտոր_____Ս.Առաքելյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ, ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԻ ՁԵՎԵՐԸ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Պաշտոնը

ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

պարգևատրման հիմքը

ՌԵԿՏՈՐ Ս.Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

№_____ «_____» _____ 20 թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՎՈԳԻՐ

_____

_____

_____

_____

_____

_____

_____ համար

ՌԵԿՏՈՐ Ս.Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

№ _____ «_____» _____ 20 թ.

ACADEMY OF JUSTICE REPUBLIC OF ARMENIA
№ 001

ԱԿԱԴԵՄԻԱ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
№ 001